տասանիրորդն կամ վեշտասանն նոցա մի ազնուացուցիչ զօրութիւնն զարգանայ։ Կերպ ազնուացուցանելոյ զմի ցեղն ինքեամբ առանց խառնուրդի, պէտք է միաւորել էգ ծնունդն որձ ծննդեան հետ, ի մէջ որոց մշանջենաւորելոյ առանձինն հանգամանքն են շատ ընդարձակուած՝ պէտք է երկրորդել նոցա սերուցն պատշաճեալ օրինօք, մանաւանդ սննդեամբ. այդ առթիւ հասակն է իբրև մի ամենաբաւական բնաւորութիւն առ ի ձեւակերպել զայնս այս կրկին ազդեցութեան ներքոյ։ Այս վերջին երկու նորաձեւութեամբն ցեղից ազնուութիւնն յաճախ պահանջէ խառնութիւն մերձաւորաց մէջ, որ է ճշմարիտ ցեղապղծութիւնն, զոր թէպէտ յանդիմանած են ուղղակի յայլասերութիւն բերելոյ համար, բայց յաջողութիւն է դատած ի Ռակիվել՝ ամենայն անգամ։ Ընտանոց մէջ իշոց տեսակք և ձիք միայն ներկայացուցանեն այլախառն օրինակ, չամբկի (զսրախ) և իշոյ խառնուրդ ծնունդն առնուանի ջորի. փասիան և մարի հաւուն ևս տուած են այլախառն օրինակ։ Ընտանոց խառնից և ծննդեան գործոյ կատարմանն ամենայաջողակն է տարուան այն աւուրքն և ժամանակն, ուր անասունք եռանդով մտանեն ջերմութեան մէջ, այս ժամանակն այլասիրութիւնն կարելի է շատ տեսակաց մէջ փոխել՝ կենաց կանոնիւ։

Շերամոց զուգաւորութիւնն տեւէ ի 20 էն մինչ 24 ժամն, բայց հասարակաբար որոշեն զայնս 8 կամ 10 ժամէն զկնի։ Իբրև զարգացման պատշաճաւոր մանաւոր գործածութիւն ունիմք պատմել, նախ՝ մալեն, որ զմատակարարաց ձին առնէ երիվար ամոլցատեալ, զցուլն՝ եզն, զիսոյն՝ ոչխար, զվարազն՝ խոզ, զաքաղաղն՝ կուրա, զմարին՝ գեր և պարարտ, զայնս վերսին ծննդեան անկարող առնելով. երկրորդ խնամել ձիս և պաճարական կենդանիս ձիոց քերչաւ, ուելլաւով, խոշոնակաւ, յարդեայ փնջով, և սպնդաւ ևն։ Ամենուց զարգացման մէջ գլխաւոր խնամքն են ժողովել մեղուաց պարքն կամ հատուածքն, որք գաղթական գնան հատատեալ բնական կամ գործնական բնակարանս։

(ՍՈՒՐԵՆ Է ՅԵՏՓՅՈ)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԿԱՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ։

(Շ-Ր-Ն-Կ-ՐԷՆ)

«Մարդ էարէ է էարէ գանյո-ց է-ղոց
Բղէ ղէարէ»։

(Ս. Ա-Ե-Դ.)

Ի ներկայս՝ վերիվերոյ հաշուելով և համեմատելով՝ Հայոց մէջ առ հարիւրն պառն անձինք առաւել կամ նուազ ուսումն ունեցողներ կգտնուին։

Ասցա մէջ եթէ կիսով չափն մեր ազգային դպրոցաց և վարժարանաց մէջ կրթուած և սովորած են՝ թէ և ոչ աւելի ընդարձակ առարկաներով և զարգացմամբք, նոյնպէս եթէ ի սոցանէ ոմանք օտար և բարձր ուսումնարանաց դիմելով կատարելագործած են՝ կամ թէ աւելի կրթութիւն և գիտութիւնները ստացած

են, սակայն և այնպէս կան բաւական անձինք՝ որ օտար և տարաղդային ուսումնարանաց մէջ գրեան թէ բոլոր կրթութիւնքը և ուսումները ընդունած են՝ և ի մանկութենէ օտարաց ձեռաց ներքև զարգացած և խնամեալ եղած։

Օտար ուսումնարաններ ասելով գլխաւորապէս պիտի իմանամք Եւրոպական այն բարձր դպրոցները՝ որք Լուսաբերականութեան, Պապականութեան ևն. . . . ոգւոյն և նպատակին կծառայեն, որք՝ է՛ որ նոցա երկիրներուն, և է՛ որ՝ նոյն իսկ Հայոց բնակած տեղեաց կամ Հայոց մէջ՝ ինչպէս որ ի Տաճկաստան և այլ երկիրներուն՝ շատ կան։

Շատ մարդիկ նկատած կլինին՝ ինչպէս որ այժմ ևս կարող են նկատել և բաղդատել զուտ Հայկական դպրոցաց մէջ ուսումն առնողները օտար վարժարանաց մէջ կրթուածներու հետ։

Եւ ի՞նչ կտեսնեն։

Հայոց դպրոցաց մէջ կրթուածներն թէ և աւելի ուսումն և գիտութիւն չունին, բայց ունին ազգային և կրօնական զգացումն, ունին հարազատ իդձ և ձրգտումներ, ունին յաւէտ ազգօգուտ ըստ կրզբունք և նպատակներ, և վերջապէս՝ եթէ օտար քարոզութեամբք և գաղափարներով երբեմն ոմանք չխմորուին, ասմենն ևս օտար ջանից և շարժմանց թելադրութիւններէն զգոյշ կմնան և միշտ ներքին ընտանեկան խաղաղութիւնը, զարգացումը և օգուտը կնախամեծարեն և կսիրեն։

Իսկ օտարաց ուսումնարանաց մէջ կրթուածներն։

Պտեսնենք՝ զի ոմանք կամ խոպան ատարբեր և կամ իւրեանց Ազգութեան և Եկեղեցւոյ վերայ ոչինչ գաղափար և բարի իդձ չունին, միայն անձանց օգտին յաւէտ հետամուտ և նախանձախնդիր են, ոմանք օտար նպատակներով խմորուած լինելով՝ իւրեանց եղբայրները յօտարութիւն հրապուրելոյ կոչին, և սակաւ ոմանք ևս՝ առանց Հայկական կենցաղավարութեանց՝ պիտոյից և կարօտութեանց հմուտ կամ ծանօթ լինելոյ՝ շատ կամ սակաւ օտարոտի ուղղութիւն և գաղափարներ ուսած լինելով՝ կջանան որ իւրեանց գիտցածները ամեն տեղ տարածեն, և այսպէս շատ տեղ խռովութիւններ կը յարուցանեն և երկպառակութիւններ կը զօրացնեն, և երբէք մի իրաւախոհութեան զիջանել չգիտեն և չեն համոզուիր անգամ։

Ուստի՞ն և կյառաջանան ի բազում տեղիս շարժուած Դպրոցական, Հոգաբարձական ևն. յուզումներն և խռովութիւններն։

Ի՞նչ կնշանակեն Գաղղիական, Գերմանական, Անգղիական ևն. ուղղութեանց ձգտումներն և կուսակցութիւնքն, և զիրար վատահամբաւել և հալածելն։

Ի՞նչ կնշանակեն զժողովուրդ յուզելոյ և գայթակղեցնելոյ համար նիւթուած ձիգ և ցոյցերն, եկեղեցականաց դէմ ատելութիւն սերմանել և սնուցանելոյ համար եղած ջանքերն, կրօնը ծաղրելոյ համար անբարոյական խլրտումներն *), կրօ-

(*) Ընթերցողաց ուշադրութեան արժանի է Տփխնաց Մեղու Հայոց Լրագրոյ 5ՐԳ թուոյն

նական արարողութիւնքը և եկեղեցական պաշտամունքը անգամ պախարակելոյ համար տեսնուած գայթակղեցուցիչ քմծիծաղ շարժմունքն և ապերասան արտասանութիւնքը։

Եթէ մասնաւոր ակնարկութեանց՝ կամ թէ մասնաւոր անձանց վերայ մատնացոյց լինելիք, աւելի օրինակներ կգտնեմք պարզապէս համոզուելոյ համար թէ՝ օտար դպրոցաց մէջ ուսումն առնող և զարգացողներն որքա՜ն մեծ վնաս և հարուած կտան Հայութեան և Հայաստանեայց Եկեղեցւոյ։

Եթէ Հայոց ազգային դպրոցաց մէջ ուսումն ստանալով և զարգանալով՝ խելահաս վիճակ և ազգային զգացմանց և ուղղութեանց մէջ արմատացած միտք ունենալէ զկնի երթան օտար և աւելի բարձր ուսումնարաններ՝ իւրեանց ուսմունքը և կրթութիւնքը կատարելագործելոյ և աւելի զարգանալոյ համար, յայնժամ ոչինչ երկիւղ չլինիլէն զատ՝ բաւականին ևս օգտաւէտ կլինին Հայոց և աւելի արդիւնաւոր անդամներ կրնան դառնալ։

Ընդէ՞ր ուրեմն օտար ուսումնարաններում կրթուող մերազնեայ անձինքներէն ուսումն առնողներն՝ եթէ վերջապէս կատարելութեամբ խելահասներին՝ մեզ օգտաւէտ են, իսկ եթէ անչափահաս՝ համբակամիտ և նոյն իսկ թերուսումն եղած միջոցներն երթան և ուսումն առնուն՝ վնասակար են՝ մինչև անգամ վտանգաւոր անդամներ կդառնան։

Պիտանալն դժուար չէ, զի Եւրոպական ելն. ազգաց յատուկ եղած դպրոցքն և վարժարանք՝ իւրաքանչիւրն ըստ պահանջմանց ազգային օգտից և զարգացմանց՝ յատուկ և որոշ ուղղութիւն և նպատակ ունի և պէտք է ունենայ. — սա բնական է, որ ամեն շէտ ունեցող ազգութիւնք ոչ միայն ի բնանց գոյութիւնը ապահովելոյ համար ամեն միջոց ի գործ կդնեն և անխոնջ կաքնին, այլ և կձգտին ի շրջակայսն գտնուողները ինքեանց քաշել և սեպհականել՝ իւրեանց օգտից պահանջմանէն թելադրուելով։

Ազգ՞ որ նոքա իւրեանց օգտից համար՝ ոչ թէ միայն իւրեանց երկիրներում, այլ նաև ի Հայաստան և այլ երկիրներ երթալով, ոմանք կրօնական նպատակաց կեղծաւորեալ և պատրուակեալ՝ և այլք իբր թէ հանրակրթական դաղափարներով ոգեորեալ՝ մեծ մեծ գումարներ կշռայլեն, դպրոցներ կբանան, Հայ մանկտին կը հրաւիրեն՝ դնելա անգամ ամենաքաջ ՝Հոգիկ Եա կտան՝ որ զան իւրեանց դպրոցներում ուսումն առնուն։

Ամենայն դպրոցաց մէջ՝ եթէ աշակերտողն խելահաս և հարազատուամբք յառաջադոյն Հայոց ազգային դպրոցաց մէջ կրթուած չէ և արմատացած միտք և կրօնական հաստատուն զարգացումն չունի, անշուշտ պիտի խմորուի և օտարներպատակաց մէջ մոլորուելով՝ նա երբէք

երկրորդ երեսին և երկրորդ սիւնակին մէջ՝ Պ. Սեդրակ Մանդինեանցի յօդուածին 7 Դ պարբերութիւնը ուր Հ-ՅԷՐԷՆ ԷՐԷՆ ՀԱՆԴԷՍՈՅՂ Ե Հ-Յ ԽՄԲԷՐ ունեցողի կողմանէ տխրատիպ և կասկածութեան արժանի մի շարժում կտեսնուի։

Ա. այս առթիւ գովելի և շնորհակալութեան արժանի է յօդուածագրին զգացմունքը և պէտք է բարեմաղթել՝ որպէս զի յարատեւէ նոյնպիսի բարի և ազգօգուտ զգացմանց և նպատակաց մէջ։

իւր Ազգին հարազատ և արդիւնաւոր անդամ դառնալ չէ կարող, մանաւանդ թէ՝ կՁանայ այլոց ևս առաջնորդ լինիլ և իւր կրթողին գաղափարները ելն. տարածել։

Երբ հիշում է իմանալ օրինակի ազգաւ յիշելով և կշռելով թէ՝ ինչպէս որ Գերմանացին, Ամերիկացին ելն. պարտաւոր չէ իւր դպրոցին մէջ Հայոց օգուտը պաշտպանել և Հայոց հարազատ ուղղութեամբ գիտութիւն և կրթութիւնք աւանդել, — և ի՞նչ հոգ նոցա, — նոյնպէս Հայն չկրնար դառնել նոյնպիսի դպրոցի մէջ Հայութեան հարազատ գաղափար և գիտութիւնները։

Ուստի Հայն՝ ի մանկութենէ կամ խակամիտ ժամանակէն սկսեալ Գերմանական կրթութեամբ և գիտութեամբք զարգանալով և միտքը բացուելով՝ ուղղակի գերմանացած կլինի, և Հայու կերպարանքով Հայոց մէջ սողոսկելով՝ մի միայն օտարին կծառայէ ի վնաս մեր Ազգի *)։

Ըստ այսմ ուրեմն դաստիարակութիւն ստացող և օտար ոգւով պատուաստեալներէն ի՞նչ օգուտ և արդիւնք կարելի է ակն ունել, եթէ ոչ զայնս՝ (թողումք յիշել օտարամոլ միտքը, և ուրիշ ազգաց հետ ի մի ձուլուելոյ ջանքը), որ ի ներ-

(*) Ցաւալի է, զի ի սոցանէ ոմանք Հայոց դպրոցաց մէջ ևս ներգործել կարթին, և մեր դպրոցաց մէջ կրթեալներէն մի քանի խակամիտ համակները որսալով՝ ինքեանց գործիք կանեն։

Հատ չտեսեր՝ սոյնպիսեաց դիմակները կպատառոտին, և ժողովրդեան արդար ցասումը և փոխարինութիւնը կվայելեն։

կայս մի քանի տեղեր տեսնուած խառնվայուզութեանց և իրերակործման ջանքն հեռացնելոյ պիտի ընդհանրանայ՝ եթէ այժմն պէտք եղած զգուշութիւնքն և աչալրջութիւնն ի գործ չդրուի։

(Ի-ՐՈՒ-ՆՔ-Ի-Ց)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ.

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐՑՐԽՈՒ ՎԻՃԱԿԻ ՆՊԱՍՏՆ.

Գեր. Առաջնորդն Հայոց վիճակին Երցախու Տ. Սարգիս Սրբազան Եպիսկոպոս՝ ինչպէս որ գրաւոր խոստացած և անցեալ տարի գործնականը ևս կատարած էր, նկատելով ի ներկայս Նիսանի բաղմակարօտ դրութիւնը և պէտքը՝ այս տարի կանխեց յանուն Նիսանի տարեկան Դ հազար ռուբլի նպաստը ի վիճակային արդեանց յղել, որոյ համար մեր շնորհակալութիւնը հրապարակաւ կմատուցանենք նորին Գերապատուութեան։

ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՆԱՄԱՑԻ ԿՈՒՍԱՆԱՑ ՎԱՆՈՒՑ ՏՓԽԵԱՑ.

Տփխեաց Կուսանաց վանուց բաղմաշխատ և արդիւնաւոր Վանամայր՝ բարեպաշտ Սարկաւագուհի Գայիանէ Իշխան — Լէհրութեանց՝ ի 13-ն ամսոյս կնքելով իւր աղդաւոր կեանքը՝ ի յաջորդ աւուրն մարմինն ամփոփուած է ի շիրիմ։

Ուստի ըստ սովորութեան ընտրութիւն լինելով՝ և ի տեղի հանդուցեալոյն Վանամայր ընդունելով մայրապետ Սարկա-